

Հրատարակ. «ՄԱՆՈՒԿ» ԸՆԿԵՐՈՒՄԻ ԱՆՈՒՄ N 1

ՀԱՅՈՑ ԳԵՏԵՐԸ

○○○○●○○○

51.482
-28

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915

20 JUL 2010

Հրատարակ. „ՄԱՆՈՒՆ“ ՀԱՅԿԵՐԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՊԵՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ

551.482

2-28

u w



ՀԱՅՈՑ ԳԵՏԵՐԸ

Խաղի յաւելածը

0000000000

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915

10 6 JUN 2013

12055

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ



5816
38

ՀԱՅՈՑ ԳԵՏԵՐԸ

«...Հայոց գետերն հազարաւոր
իջանէին ճաճանչաւոր.
Հազար թէ գետ, բիւր թէ առւի,
Հայոց ծովակքըն այլ աւելի:


Այ դրախտի ջրեր, իջէ՛ք, իջէ՛ք,
Ձերկիրն Հայոց արբեցուցէք.

Ահա վտակունք կըրկըջային,
Ջորն ու հովիտ արբենային.
Յամէն կաթէն աստղիկ ծնէր,
Յամէն ծընէն ծաղիկ ծագէր...»

Հ. Ղ. Ալիշան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԻՄԱՆ

...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության
 ...հայկական բնակչության



ճանաչ

Արախ

(Մրախի, Արախ)


Արաքսը մեր Մայր գետն է։
 Նա ծնունդ է առնում ու վերջանում հին
 Հայաստանի սահմաններում։ Արաքսի ափերին
 են անցել մեր պատմութեան փառաւոր շրջան-
 ները։ Արաքսի ափերին են ծաղկել հին հայոց
 մայրաքաղաքները և այժմ էլ նրանց աւերակ-
 ները գտնւում են Արաքսի ափերին։

Արաքսը իր սկիզբն առնում է Կարնոյ լեռ-
 ների Արծաթի աղբիւրներից և Բիւրակնեան
 լեռների էն անթիւ աղբիւրներից, որոնցից մինը,
 մեր ժողովրդի ասելով, Անմահական ջրի աղբիւրն
 է։ Ասում են դրանից է, որ էնքան անուշ է ու
 առողջարար մեր Մայր Արաքսի ջուրը։

Սրբնթաց է Արաքսը։ Սրբէն Աստուծաշունչը
 նրան անւանում է Գեհոն, որ կընշանակի սրբն-

Թաց: Բիւրակնեան սարերի բարձրութիւնից սկսած՝ առհանք առած՝ անդադար իջնում է ցած, դէպի ծովը: Տեղ տեղ, ինչպէս Բասենի ու Գողթանի ձորերում ու նեղ կիրճերում, կատաղում, փրփրում է նա ու ստեղծում է ահուելի տեսարաններ: Էդ տեսարաններից ամենից հոյակապը Գողթանի հոչակաւոր Քարավազն է, որին պարսիկները անւանել են Հալլաշի բազար, բամբակի կամ փրփուրի հանդէս: Տեղ տեղ էլ, ինչպէս Սուրմալի, Միլի ու Մուղանի տափաստաններում, հանգստանում է, մարմանդում է Արաքսը ու բազմաթիւ առուններով առատ ջուր է բաշխում իր շրջակայ դաշտերին:

Արաքսի ջրի բարձրութիւնը



Գարուն

Ամառ

Աշուն

Արաքսը անցնում է մօտ 900 վերստ տարածութիւն, Մուղանի անապատում միանում է Քոին ու գնում, թափում Կասպից ծովը: Արաքսը վաղ ժամանակները Քոից առանձին է եղել թափելիս ծովը, բայց ինքն էլ, Քուռն էլ էնքան հող ու տիղմ են տարել լցրել ծովը, որ ժամանակի հետ ծովը հեռացել է ու իրենք, երկու մեծ գետերը, հանդիպել են իրար:

Արաքսը տեղ տեղ, մի քանի անգամ փոխել է իր ճանապարհը ու միշտ կամուրջներ է խորտակել: Դրա համար էլ հնում Արաքսին անւանում էին Կամուրջների թշնամի Արաքս:

Արաքսի ափերին շատ ուրիշ հանքերի հետ հարուստ աղահանքեր կան, որոնցից նշանաւոր է Կողբայ աղահանքը:

Առանձնապէս հոչակաւած է Արաքսի հովիտի մրգեղէնը:

Անհանգիստ է Արաքսը, բայց անուշ է ու առատ:

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամուրը զընում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը փընտրում եմ:

Բայց նորա միշտ յեղյեղուկ,
Պղտոր ջրով եզերքին
Դարիւ գարիւ խրփելով
Փախչում էին լալագին...

«...Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կը մնան պանդուխտ,
Ինձ միշտ սրգւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»


Ռ. Պատկանեան

ՀԻՆ ԱՐԱՔՍԸ

Հին Արաքսը զարմանալի որոգայթներ ունէր: Նա և զարմանալի քմահաճութիւններ ունէր: Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կռւում էր իւր անհաւասար եզերքի հետ, և կարծես, դժգոհ էր այն նեղ շաւիղից, որ գծել էր նրա ընթացքի համար նոյնպէս քմահաճ բընութիւնը: Նա սիրում էր ընդարձակութիւն, սիրում էր ազատութիւն: Նեղ շաւիղը վրդովեցնում էր նրան:

Երբեմն լեռնային երկու զուգահեռական գօտիներ միաբանում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ: Այդ միջոցին նրա կատաղութիւնը չափ չունէր: Ան-

ռելի յորձանքներով զարկում էր իւր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր և, մարդ, կարծես, լսում էր նրա սուկալի որոամունքի մէջ այս ճակատագրական խօսքերը. «Նեղ է... նեղ է... խեղդում եմ...»



Արաքսի բարավաղը

Երբեմն լեռնային գօտիների միաբանութիւնը խախտւում էր, բաժանւում էին միմեանցից, հեռանում էին միմեանցից, և բաց էին անում նրա առջև լայն ընդարձակ տարածութիւն: Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չունէր: Ազատւելով իր նեղ կիրճից, մի չար վիշապի նման անխնայ կերպով ողողում էր, յեղյեղում էր իւր հարթ կանաչադարձ ափերը, և կամ մի արբեցած հսկայի նման, երբեմն դէպի աջ էր թեքւում, երբեմն դէպի ահեակ էր խոտորւում, և երբէք ուղիղ ճանապարհով չէր գնում:

Բաճճի

Ա Ր Ա Ք Ս Ի

ձախ վտակներից են Արփաչայը, Ախուրեանը, Քասաղը, Մեծամօրը, Ջանգին, Ագւս գետը, Վեդի ցուրը, Ջահուկը (Նախիջևանի գետը), Երնջակայ գետը (Ալինջա), Զաւրնդուրը, Բարկուսան ու Աղաւնու գետը:

ԱՐՓԱԶԱՅԸ

դուրս է գալիս Արփա լըճից և լճի անունով էլ կոչւում է Արփաչայ: Ալէքսանդրապօլի մօտից հոսելով, քաղաքից 20 վերստ ներքև խառնւում է Ախուրեանին:

— «Է՛յ հալալ է... Արփաչայի ջուրը զարկում է ափին,

Ափին զարկում, երգ է ասում, զարթեցնում է իմ հոգին.


Անուշ են, ջան, հին երգերը լեռների մէջ պահպանւած,

Ժողովում է Արփաչայը, տարածում է փրփրութիւն...»

Յովհ. Կոստանեան

ԱԽՈՒՐԵԱՆԸ

գալիս է Կարսայ լեռներից, Անի քաղաքի ձորով անցնում գնում խառնւում Արաքսին: Ախուրեանը իր անունն առել է իր վրայ շինած հին Ահուրիանի քաղաքի անունից: Սրան յաճախ շփոթում են իր Արփաչայ վտակի հետ ու անւանում են Արփաչայ: Ախուրեանը իր վերին հոսանքում կոչւում է Կարսայ գետ:




Կարսայ գետն ու կամուրջը

ԱՌՈՒՐԵԱՆ

Նա իմ բոլոր թափառումների ժամանակ ոչինչ չեմ յիշում, բնութեան և ոչ մի տեսարան, որի գեղեցկութիւնը անյոյս թախիժ ունենար, լացի, վշտի այն աստիճան հզօր հաճոյք յարուցանէր մարդու հոգում, որքան Ախուրեանի ձորը, Անիի մօտ, աշնանային պայծառ երեկոյին։ Բնութեան իւրաքանչիւր գեղեցկութիւն, որքան և կենսալից ու սրտապարար, որքան և անմասն լինի տխուր յուշերից, ինքն ըստ ինքեան միշտ

անուշ, դուրեկան վշտի աղբիւր է։ Բայց Ախուրեանն իր ժայռոտ ձորի մէջ, աւերակների ոտքի տակ, երեկոյեան մշուշով սքողւած, ամբողջապէս ցաւ է ու արցունք։



Ախուրեանը Անի քաղաքի ձորում

Ո՛ւհ այս վշտոտ Ախուրեանը...

Մշտականաչ ափերի մէջ, խորը, խորը, համարեա անդունդներում, բարձրաբերձ ու խո-

ժողովուրդի ժայռերի տակ հոսում է. նա հնազանդ ու յոգնած անվերջ, ծանր պայքարից՝ հոսում է, գալարւում է ցաւագնօրէն, այնպէս որ մարդ տարւում է նրա դաժան կեանքի ճիգը:

Եւ նրա ձայնը ոչ թէ վիրաւոր գազանի մռնչիւն է, այլ մեղմ, թախծոտ վշիշոց, ինչպէս սողները մոլորւած հովերի, ինչպէս սոսափիւնը լալկան ուռնինքների: Նա հեծկտում է այն սր՝ գաւորի պէս, որ կորստի անդառնալիութեան առաջ հնազանդ է, չի ճշում, չի աղաղակում, վայնասուն չի բարձրացնում, քանի որ գիտէ, թէ այդ բոլորն անօգուտ է:

Ա. Ահարոնեան

Ք Ա Ս Ա Ղ Ը

կազմւում է Արագածի և Արայի լեռան աղբիւրներից: Մաղմոսավանքի, Աշտարակի ու Օշականի ձորերով «կարկաշատն ու ծիծաղագնաց» իջնում է Արարատեան դաշտը ու խայտալով խառնւում խոր ու մարմանդ Մեծամօրը, ինչպէս կայտառ երեխան կը վազի կրնկնի իր պապի գիրկը: Քասաղի ու իր ձորի մասին էսպէս է ասում Քասաղի ձորի ու Աշտարակի սիրահարը, Պ. Պռօշեանը:

«... Թող գայ մի եւրոպացի լուսաւորեալ և կանգնի Աշտարակումը, Ծիրանաւոր եկեղեցու


մօտ, և թող արշալոյսը նոր ծագելուս, կամ մի պարզ, լուսաւոր ու աստղաճաճանչ գիշեր նայի իր առաջին փուլած ձորովը դէպի արևելք: Տես, թէ ինչպէս կը զմայլի մեր լայնարձակ ձորի տեսարանովը, ինչ սքանչելի պատկեր կը տեսնի իր աչքի առաջին, ինչ տպաւորութիւն կունեն-



Քասաղը Աշտարակի ձորում

նայ մեր օտարական հիւրի վրայ ձորը իր կարկաշատն Քասաղի արծաթափայլ գետովը, իր տերեւախիտ ծառերովը, իր եռակամար կոփածոյ կամրջովը, իր հանդէպի Փոկաբերդ կոչւած բնական միապաղաղ պատովը, մանաւանդ եթէ գարնան սկզբին, արեւածագին այս տեսա-

րանին աւելի շքեղութիւն կը տան կարմրակը-
տուց կաքաւեների կղկղան ներդաշնակ ձայները...»



Զ ա ն գ ի ն

Զ Ա Ն Գ Ի Ն

է գալիս, ճանապարհ տւէք: Գալիս է հին
Հրազդանը: Գալիս է իր վառւած, ոգևորւած
երգչի, մեր անմահ իմ. Աբովեանի հետ: Եւ թող
նա պատմի, թէ ինչպէս է գալիս Զանգին:

«Ինչպէս մի կատաղած վիշապ՝ երկնքիցը
թռած գլխիվեր ձուլուակ, մի տուտը Սևանի հան-

դարտ ծովումը, մի տուտը Արագի բրբրւած ա-
փերումը, սար ու ձոր կըխչոր տալով, քանդե-
լով, տապալելով, քափ ու քրտինք բերանը կո-
խած, գզգզած մազերը քեալին ցրցւած, կա-
պը կտրած, գրծւած, ռեխն աւագով, զիբիլով
լիբը, էս կողմն, էն կողմը փնջացնելով... որ չի
գալիս ամենի Զանգին...

...Զանգի, իմ Զանգի, Գեղեցիկդ իմ Զանգի:
Քո երկնանման երեսը տեսնելիս, քո տխուր
ձէնը լսելիս, քո սուրբ ջուրը բերան առնելիս,
քո ծաղկազարդ ձորերի միջումն, քո զովարար
ափերին, քո սիւտակ, լուսաթաթախ փրփրի
տակին, քո պարկեշտ Մամբռու ափին, քո խըն-
կահոտ ծառերի տակին, քո անմահական ծա-
ղիկների միջին...»

Բայց ինչո՞ւ խօսեցրինք էս վշտոտ ու տը-
խուր, էս հոգեհուր մարդուն: Սա էլ չի լուի:
Սա ինքն էլ Զանգուի նման մի բան է:


Նայեցէք դէպի արեւմուտը, յարզանք ցոյց
տւէք, ահա գաւազանին ապաւինած առաջ է
գալիս մեր մեղմ ու անուշ, մեր միշտ պան-
դուխտ ալևոր Նահապետը, Ալիշանը, դէպի Զան-
գին, դէպի Հրազդանը:

«Հրազդան, գետակդ իմ հայրենի,
Հրազդան, ջրրիկդ իմ անուշիկ.
Ահա թողել գնդն օտարի

Բաբկէնս հասել եմ պանդըխտիկ:

Այ Հրազդան, այ ջուրք հայրենիք,

Այ ափունք, յէր լայք լըռիկ...»



» Երևանի կամուրջը Զանգուի վրայ

Հապա Ագաս գէտը, Գառնու ջուրը, որ Գեղամայ կանաչ սարալանջերից, Գեղարդայ վանքի մօտից, Տրդատայ թախտից է իջնում:

«...Սոր, ժայռոտ ձորի պատըռտած կողէն
Պարզուկ գըմբէթ մը երկինք կըմիտի,
Սուր սուր սրլաք մը լարւած աղեղէն,

Որ, ըսես, հիմա վեր թռչի պիտի:
Վարը Ագատը ծեր ժայռի գըրկին
Դէմ կուգայ անոր մոլեգնոտ կըրքին,
Եւ օծի մը պէս, որ կելնէ բոյնէն,
Շուտ դուրս կը սողայ Գեղամ սարերէն:
Բայց այդ խօլ, հապճեպ փախուստի ատեն
Երբ կը հանդիպի այն սուրբ գըմբէթին,
Պատկառած, ըզգուշ կը քաշւի մէկդին,
Որ Գեղարդ վանքին տեղ տայ իր տաշտէն:
Բայց ինչ... Տեսած էք բնութեան ծոցին
Պապերնուդ փառքը լըռիկ, առանձին...»

Լ. Շանթ

ԲԱՐԿՈՒՇԱՏԸ

Մեր հին Որոտանն է: Թուրքերը Ուրուտեն ասում թէ գետին թէ Որոտնայ գիւղին, և յաճախ էզ անունով էլ գիւղը նշանակած է լինում քարտէզի վրայ: Վերին հոսանքի Բազար քէնդ գիւղի անունով Բազարչայ էլ է կոչւում: Հոսում է Տաթևի վանքի մօտից, Հալի ձորով: Նըշանաւոր է սրա բնական կամուրջը, որ յայտնի է Սատանի կամուրջ անունով: Տաթևայ ձորերում Որոտան գետը պահել է իր անունը, որ էնքան գալիս է իրեն: Բայց ահա և ինքը:

Ո Ր Ո Տ Ա Ն Ը

«... Բոլորակ լուսինը կանգնած է ջինջ, անամպ երկնքում, առատ լոյս է թափում Տաթևի առաջ ընկած անսահման ձորի ու լեռների վրայ: Այդ սարերը կոյտ կոյտ են դառել, դէս ու դէն են ձգել իրանց մէջքերն ու հսկայական ուսերը, գիշերային խորհրդաւոր քողով ծածկել են իրանց ահարկու մարմիններ: Ուր են գնացել, որտեղ են հասնում: Իսկ դրանց, այդ լեռների մէջ տեղ ձգւում է Սիւնեաց երկրի հպարտ թագուհին, հրաշալի Որոտանը: Ոչ մի ժամանակ նա այնքան փառաւոր չի, ինչպէս այս պահուն: Նրան լուսաւորում է պայծառ արեգակը, նրա վրայ իջնում են մշուշի կոյտերը, թափւում է անձրևը, որոտում է ամպը, փայլատակում է կայծակը, ոչինչ, միայն լուսնի հեղ, ամօթխած լուսնի տակ է նա դիւթական պատկեր ընդունում և միայն այդ ժամանակն է հասկանում, թէ ինչ է ինքը: Ահա արծաթեայ օձը օղակ օղակ պտըտւում է, կռմաններ է անում: Փրփրը, փրփուր է հանում գծած գետը, մոնչում է, աղաղակում է վիթխարի ժայռերի դէմ, որոնք մի քարացնող յամառութեամբ անշարժացել են նրա երկու կողմին և սառն, քարային ծիծաղով են ականջ դնում այդ

դարաւոր գոռոցներին: Գիշերը հանգիստ է, խաղաղ, անվրդով. մարդ, անասուն, գազան լռել են, ձայն չը կայ ոչ մի տեղ. ամենքին հանգստութիւն է հարկաւոր, ամենքը ձանձրանում են շարժելուց, ձայն հանելուց: Միայն այդ գետը չը գիտէ հանգիստ, դադար. գլուխ վերցրած փախչում է նա, դէհ, տեղ, տեղ տւէք, սարեր, ժայռեր. ձոր տւէք նրան, լայնացրէք, հարթեցէք նրա ճանապարհը: Չէք անում: Եւ նա այդպէս կը գոռայ, այդպէս մոլեգնաբար իր խոնաւ ու ուժեղ համբոյրները կը տայ ձեր ոտներին: Եւ երկինք ու երկիր, անտառ ու լուսին ականջ են կախել այդ խորխոր ու վայրենի ձայնին. ուշադրութեամբ ականջ են դնում, կարծես հասկանում են, թէ նա ինչ է ասում, ինչի մասին է աղաղակում, բորբոքում: Ականջ է դնում խորխորապանծ Գազէլը հեռից, բարձրացնում է իր գլուխը, որ երկնքի տակից տեսնէ նրան. ականջ է դնում հայ օրիորդի առաքինութեան. յաւիտենական արձանը, Շահանգուխտի սապատող ժայռը, ականջ է դնում մօտիկուց, բոլորովին կախ ընկած Որոտան Արեւի վրայ:»

է



Կապանի ջրվեժը Չալենդուրի վերին հոսանքում

Ապա թէ իրար ետեից գալիս են Ղարաբաղի սարերից իջնող գետերը: Վեդի ջուրը, Արփա գետը (Արևելեան Արփաչայ), Ջահուկը (Նախիջևանի գետը), Երնջակը (Ալինջաչայ), Չալենդուրը, Աղաւնու գետը (Աքեարի), որ միանում է Բարկուշատին, և Քեօնդալանը:

Աղաւնու գետը իր վերին հոսանքում էնքան է սրընթաց, որ կոչւում է Իլդիրիմ չայ, այսինքն Կայծակի ջուր: Ու բոլորը միասին, գետերը եռալով ու գոռալով, վտակները կարկաչելով ու կանչելով, Հայոց զմրուխտի սարերից հազարաւոր, ճաճանչաւոր իջնում են դէպի Արաքս ձախ կողմից:

Ա Ր Ա Ք Ս Ի

աջ վտակներից առաջինը Մուրցն է, որ գալիս է Բիւրակնեան լեռներից: Մուրցը Բասենում Բասենի կամ Հասանդալայի ջուր է կոչւում, Բասենում էլ միանում է Արաքսին ու գետ է դարձնում, ինչպէս ասում են մեր պատմիչները: Ապա գալիս են Կապոյճ գետը, Ջաղարանը, Վարդամարզը կամ Զընչաւատը, Գինայ գետը, Տամբասը, Դեդինը, Մակուն, Տղմուսը, Սիպսակն ու Կարմիրը:

Կ Ա Պ Ո Յ Տ

գետը Կաղզւանայ գետն է: Նրա վրայ է հին Արտագերս ամրոցը, որ յետոյ Կապուտբերդ էր կոչւում, իսկ այժմ Կաղզւանայ բերդ էն ասում:

Գ Ի Ն Ա Յ

գետը Մասիսի ստորոտներից է գալիս: Շատ թռչուններ կան Գինայ գետի եղէգ-
կոտներում ու զանազան որսեր: Աւանդու-
թիւնն ասում է, թէ մեր Արտաւազդ թագաւո-
րը էս գետի ակունքներում էր որս անում, որ
զահավէժ ընկաւ մի խոր վըհի մէջ ու կորաւ:

Մասիսը չի թողնում հեռու գնան իր ջրերը:
Ներս է ծրծում իր փութը ու Կաւաղոտ ստորոտ-
ներով ու ստեղծում իր վտանգաւոր թաքթա-
քութիւնները: Կամ խրոտները: Էդ պատճառով էլ
Մասիսից սկիզբ առած քիչ գետ է կարողանում
հասնի Արաքսին: Էդ քչերից մինն է Տամբաս գե-
տը՝ որ և Մասիսիցն է և Տամբատայ սարերից:

Դ Ե Ղ Ի Ն


գետը (սարը սող) Գայլատայ լճիցն է
դուրս գալիս: Ճամբին անց է կենում Կո-
գովիտի (Բայազիդի) մեծ շամբից: Էն մեծ
շամբից, ուր մի ժամանակ, Ջիրաւի պատե-
րազմից յետոյ, գէպի Պարսկաստան փախչելիս,
թաղւեց Մեհրուժան Արծրունու ձին, Սմբատ
Բագրատունին ետեից հասաւ ու զլուխը պսա-

կեց շիկացած երկաթով: Սիպսակ ու Կարսի
գետերը (Աղսու, Ղզըլ սու), ինչպէս և Դեղինը,
իրենց անուններն անում են իրենց դաշտերից
ու նրանց բնութիւնից: Բայց Արաքսի ձախ վը-
տակների մէջ ամենանշանաւորը մի փոքրիկ
գետ է, Մակւայ գետի մի ճիւղը (ոմանք Սպի-
տակ ջուրն են ասում), որի վրայ մեծ անցք է
անցել: Դա Աւարայր կամ Շաւարշան դաշտի
Տղմուս գետն է: 451 թւականին Տղմուտի վրայ
տեղի ունեցաւ Վարդանանց մեծ պատերազմը
ու էն օրւանից Տղմուտի անունը հայ մարդու
համար դարձել է սրբազան:

Տ Ղ Ս Ո Ւ Տ Ը

Անցան դարեր: Դեռ Տղմուտը ինձեզի
Գիշերները խանդարում է: Կան վրդով
Աւարայրի անուշաբունը, և չղնի
Մինչև այսօր նա տղաւիկից իր վրջի
Եւ ծերունին հառաչում է սրգաւոր,
Արիւն դարձած կոհակները պիտո
Գընում, գալիս, զարնւում են, փերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին:


Յովհ. Յովաննիսյան:



ՄՏՈՐՄՈՒՆՔ ՔԸՌԻ ԱՓԻՆ

Դընացի գետափ, որ ցրւեմ մաշող իմ մտքերն
աննինջ,
Փընտրեցի իմ հին, իմ ծանօթ տեղը, որ հանգ-
չեմ մի քիչ:
Ափին թիկնեցի, փուլ եկաւ սիրտըս ու լաց եղայ ես,
իմ շուրջն էլ թախծոտ, իմ շուրջն էլ համակ
տխուր էր ինձ պէս...
Ծանրը յուզւում է ու քրթմընջում է Քուռ գե-
տը անվերջ,
Դողում է խաղում երկընքիւ լազուրն ալիքների մէջ:
Ու հեռւում մարող վառ վերջալուսի շողերի
տակին,
Գետափին, մենակ, ահանջ եմ դընում նըրա
աղմուկին:
— Քուռ, մայր, դառերի անբարբառ վկայ, հո-
սում ես՝ յուզւում,
Ո՛վ գիտի թէ ո՛ւմ ինչ ես շըշընջում, ինչեր ես
ասում...»

Ն. Բարսիձաշիկի



Քուռն ու Մցիկթի կամուրջը

ՔԸՌԻ ԱԶ ՎՏԱԿՆԵՐԸ

Քուռը համարւում է հին Հայաստանի ու
Վրաստանի սահմանագետը և Քըռի միայն աջ
փտակներն են հայկական, բացի Փոցխովը, որ
ձախ փտակներից է: Դրանցից են Փաււանան,
որ դուրս է գալիս Փաււանայ լճից, Փոցխովը,
Ալգէթը, Խրամը, որի Խրամուլի ձուկը հռչակ-
ւած է Թիֆլիզում: Դեբեդը, Աղսեւը կամ
Աղսթափան, որ հին Կողբափորն է, Տաւուրը,
որ թուրքերը Թաւուզ են անւանել: Զագամը

որ հին Լինասն է: Շամբուր, Բերբեր, որ Գան-
ձակայ գետն է: Գուրակը, Գուրանը, Թարթաուր
Խաչենագետն ու Գարգաուր (Կարկաուր):

Սրանցից մի քանիսը, ինչպէս օրինակ Խա-
չենագետը, Գարգաուն ու Թարթաուր, սովորաբար
աշունը, ձմեռն ու ամառը սաստիկ բարակում
են կամ բոլորովին ցամաքում են ու Քրոին չեն
հասնում: Մի կողմից շատ առուներ են առնում
գաշտերը ոռոգելու համար, միւս կողմից ներս
են ծրծրում աւազոտ, անջրդի տափաստաննե-
րում: Միայն գարնան ձնհալքին ու անձրեային
տարիներն են տեղ հասնում, և մինչև անգամ
վտանգաւոր են դառնում, մանաւանդ հեղեղնե-
րի ժամանակ:

Թ Ա Ր Թ Ա Ռ Ը

(Հին Տրտուն) Ղարաբաղի մեծ ու անա-
նի գետն է: Երեք ճիւղերով սկիզբ է առնում
Ղարաբաղի լեռներում ու սրընթաց իջնում
Ջրաբերդի ձորով, գնում հին Պարտաւի մօտ
խառնւում Քրոին: Թարթաուր գարնանը բազ-
մաթիւ առուներով առատ ջուր է տալիս իր
ներքին հոսանքի դաշտերին: Երախտագէտ ժո-
ղովուրդն էլ երգ է հանել, ասում է՝ վաթսուն
առու կը տաս, Թարթաու, էլ էն ես, ինչ կաս,
Թարթաու: Վարար Թարթաուն համեմատում է

Արաքսի ու Քրոի հետ, իսկ տարւայ միւս ե-
ղանակների ու երաշտ ժամանակի բարակ Թար-
թաուն ծաղրում է, ասում է՝ մուկն էլ քեզա-
նից կանցնի, Թարթաու: Բայց ամենաբարակ
ժամանակ էլ Թարթաուն ծաղրելը վտանգաւոր
բան է: Հերիք է, որ մի հեղեղ եկաւ Ղարաբա-
ղի լեռներում, յանկարծ ամենի վիշապի նման
որոտալով մութը ձորերից դուրս կրգայ Թար-
թաուր ու ծաղրողի թուքը կը ցամաքի:

Թ Ա Ր Թ Ա Ռ Ը

Գնում ես, գնում ես, միկնոյն լռութեան,
միկնոյն անշարժութեան միջով: Յանկարծ նիր-
հող անտառի խորհրդաւոր հանգստութիւնը աղ-
մըկում է և կարծես լսում ես մի խուլ, ստոր-
երկրեայ որոտի ծանր դղրդոցը: Որքան առաջ
ես գնում, շրջապատող լեռները սկսում են այն-
քան աւելի որոտալ:

Նայում ես դէպի երկինքը. տեսնում ես
նոյն մանիշակագոյն կապուտակութիւնը իր նուրբ
ժպիտով, նոյն լուսաւոր արեգակը իր պայծառ
ճառագայթներով: Ամպի մի փոքրիկ պատառ
անգամ չի երևում:

Բայց հրտեղից է լսում այդ խուլ, սար-
սափեցնող որոտի ձայնը: Մտածում ես՝ ան-
դունդի մէջ կատարւում է մի սոսկալի խռո-

վութիւնս. կատաղի տարրերը մարտնչում են միմեանց հետ: Ժայռերը, ապառաժները մոնչում են: Խաղաղ մթնոլորտը սկսում է երկկւղագծութեամբ դողդողալ: Եւ ուղեորին տիրում է մի սարսուռ:

— Դա Թարթառ գետի ձայնն է լսում, — հանգստացնում է քեզ առաջնորդը:

— Շուտ կը հասնենք:

— Այդ սարի միւս կողմն է:

Անցնում ես սարը, անցնում ես սարի միւս կողմը: Քո առջև բացւում է մթին անդունդ: Նայում ես անդունդի խորութեան մէջ, աչքերդ սեանում են, գլուխդ պտոյտ է գալիս, ոչինչ չես տեսնում: Յետոյ երևում են ծառերի հաւասար կատարներ, որոնք կարծես մկրատով հարթւած լինեն: Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորութիւնը: Ուրիշ ոչինչ չի երևում:

— Ահա Թարթառը, — ցոյց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով դէպի ձորի խորքը:


Բայց Թարթառը չի երևում: Նա կտրել, անցել է ժայռերի ամրութիւնը. նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգւածը. նա հազարաւոր քայլերով ցած է իջել դէպի երկրի սիրտը. նա դարերով գործել է այստեղ, մինչև քարերի միջով բաց է արել իր համար մի նեղ

և անձուկ ճանապարհ: Այդ ճանապարհի մէջ խեղդւած, ճնշւած, մի հսկայ վիշապի նման գալարւում է նա, պտոյտներ է գործում, որոտում է, մոնչում է, և կատաղի կերպով աղմուկ է հանում, զայրանում է, թէ ինչու չէ կարողանում աւելի լայնացնել իր ուղին: Իսկ վիթխարի լեռները երկու կողմից աւելի և աւելի սեղմում են նրան, և նա բարկացած՝ աւելի աղաղակ է բարձրացնում:

Րաֆֆի

Դ Ե Բ Ե Դ Ը

մեր հին Ձորագետն է: Բօրչալւի դաշտում Բօրչալու էլ են ասում: Դեբեդի գլխաւոր ճիւղերը երկուսն են. մինը Փամբակայ լեռներից՝ Փամբակայ ձորով և գալիս, միւսը գալիս է Մթին (Ղարախաչի) սարերից: Գալիս են Լօռու ձորում միանում, կազմում Դեբեդը: Դեբեդը սրընթաց է ու գիժ: Եւ, որովհետև մեծ ջրաբաշխ ունի, շատ է վտանգաւոր հեղեղների ժամանակ: Դեբեդի վրայ է Սանահնի նշանաւոր կամուրջը, որ շինել է աւել XI դարում հայոց Նանէ Թագուհին:



Դերեղն ու Սանահնայ կամուրջը

Էն Լօռու ձորն է, ուր հանդիպակաց
ժայռերը՝ խորունկ նօթերը կիտած,
Դէմ ու դէմ կանգնած՝ յամառ ու անթարթ,
Անվերջ իրարու նայում են հանգարտ:

Նրանց ոտքերում զազազած գալի
Գալարում է գիծ Դերեղը մոլի,
Խելագար թռչում քարերի գլխով,
Փրփուր է թրքում անզուսպ երախով,
Թրքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում էն ծաղկած ափերը հին հին,

Ու գոռում գիծ-գիծ,


— Վահ-վիշ, վահ-վիշ...»

Մութ անձաւներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ հըտալիտ ձէներով
Ծերի հառաչքին արձագանք տալի,
Ծաղրում են նըրա գոռոցն ահուկի


Ու կըրկնում գիծ-գիծ,

— Վահ-վիշ, վահ-վիշ...»

Յովհ. Թումանյան



Դ Ե Լ Ե Գ Ը



Ե փ ր ա տ

Կ է տ Keta

Եփրատ կամ Ֆրատ կը նշանակի գերազանց գետ: Հայոց և ամբողջ Փոքր Ասիայի ամենամեծ գետերից մինն է: Սուրբ զրբի յիշատակած Մեծ գետն է:

Եթէ Արաքսը հայոց Մայր գետն է, Եփրատն էլ հայոց Սրբազան գետն է:

Եփրատի ափերին ու Եփրատի հովիտներում են պաշտել թէ հայոց հին կրօնի աստուածներն ու աստուածուհիները, թէ նոր կրօնի սրբերն ու սրբուհիները: Նրա ջրերով է ցօղել իրեն հեթանոս հայր Վարդավառի տօնին, նրա ալիքների մէջ էլ մկրտել ու ընդունել է քրիստոնէութիւն:

Եփրատն էլ նոյնպէս զօրանում է Բիւրակ-նեան լեռների առատ ու անարատ աղբիւրնե-

րով, ինչպէս հայոց գետերից շատերը, ինչպէս և ինքը Արաքսը: Թէ Արաքսը, թէ Եփրատը, երկուսն էլ ծնունդ են առնում նոյն սարից, մինը մի կողմի լանջերից, միւսը միւս կողմի, ու իրարից հեռանում, գնում են՝ մինը դէպի արեւելք, միւսը դէպի արեւմուտք:

Եփրատի ափունքն էլ նւիրական են, ինչպէս հայերի, էնպէս էլ Փոքր Ասիայի բոլոր ժողովուրդների համար:

Երկու ճիւղ ունի Եփրատը: Մինը, գլխաւորը, որ սկսւում Կարնոյ բարձրաւանդակից, կոչւում է Կարնոյ գետ, և Կարնոյ դաշտից անցնելիս, տարածւում, կազմում է Կարնոյ Շամբը: Թուրքերը էս ճիւղին ասում են Գարա-սու (սև ջուր): Սա, իր ճանապարհին նորանոր օժանդակ գետեր առնելով, կազմում է Արևմտեան Եփրատը:

Միւս ճիւղը, որ գալիս է Ծաղկանց լեռներից, Արածանին է կամ Արևելեան Եփրատը: Երկու ճիւղերն էլ զուգահեռաբար հոսում են դէպի արեւմուտք, ապա թէ մեծ ու փոքր Հայքի սահմանում Արևմտեան Եփրատը թեքւում է դէպի հարաւ, հանդիպում Արածանուն, իր հետ առնում ու իջնում ներքև: Ներքև, Եփրատը մի կողմից, Տիգրիսը միւս կողմից՝ մէջ են առնում՝ ստեղծում Միջագետքն ու ապա

միանալով, անցնում, գնում թափում Պարսից ծոցը, Հնդկական օվկիանոսը:


Թէ Եփրատը, թէ Տիգրիսը՝ սահանքաւոր են իջնում Հայաստանի բարձրութիւնից: Միայն Եփրատը երեքհարիւր ջրվէժ ու քարավազ ունի իր ճանապարհին, որոնցից Հայաստանում յայտնի է Գրգուռի քարավազը: Էսպէսով էլ երկուսը միասին, երկաւր երկար դարերի ընթացքում, շարունակ հող ու տիղմ են տարել լցրել Միջագետք ու ասեղծել մի պարարտ հող, որի հետ Նեղոսի հովիտն էլ չի կարող համեմատուել: Եւ միշտ հացահատիկների ամենաառատ հողն է եղել Միջագետքը, ցորենը Միջագետքից է տաւածուել ամեն կողմ: Եւ էնտեղ, Եփրատի ու Տիգրիսի ափերին են ծաղկել, հարստացել ու զօրացել հսում Ասորեստանն ու Բաբելոնը: Մէկի մայրաքաղաքը, Նինւէն, եղել է Տիգրիսի վրայ, միւսինը, Բաբելոնը, Եփրատի: Եւ հէնց էդ հարստութեան համար էլ Միջագետքը ենթարկւել է անվերջ արշաւանքների, աւերի ու աւարի, մինչև որ դարձել է ամառի:

Եփրատը ինչքան սահանքաւոր է Հայաստանում, էնքան էլ խաղաղ ու մարմանդ է Հայաստանից դուրս, Միջագետքի տափաստաններում, ուր տեղ տեղ չորս կողմի վրայ փուռում, լայնատարած եղէգնուտներ է ասեղծում, որոնք կոչւում են «Եղէգնուտների ծովեր», կամ թէ

չէ անսահման ճահճուտներ, որոնց «մոծակների ծնողներ» են անւանում:

Իր ներքին հոսանքում նաւարկելի է Եփրատը: Նկարներ են փացել, որ ցոյց են տալիս, թէ ինչպէս մեղանից չորս հազար տարի առաջ էլ Հայաստանից Եփրատով ու Տիգրիսով ապրանք էին տանում վաճառելու Բաբելոն ու Ասորեստան՝ փչած տկերի վրայ սահմանած լաստերով, որ կոչւում էին քէլէքներ: Էդ քէլէքները և տկանաւերը կամ նաւտիկերը մինչև էսօր էլ դեռ բանում են ինչպէս Եփրատի ու Տիգրիսի, էնպէս էլ Արաքսի վրայ

Եփրատը շատ տեսակ ձկներ ունի, որոնցից մի քանիսի անուններն են թեփուկ, դեղիկ, կարապետիկ, մոխ, ընչաւոր, սազան կամ ծածան և մի մեծ ձուկը, որ կէտ են անւանում:




Եփրատի հին քէլէքը

ԵՓՐԱՏԻ ԱՓԵՐԻՆ

Եփրատի ափերով կրնժանանք, որոյ պարզ
և ջինջ ծոցոյն մէջ բոլորեալ լուսինը կը լողայ:
Ամեն կողմէն բարձրաբերձ լեռինք լուսնակով
և սոււերով գեղափայլ: Խորին լուսթիւն
և դադար համայն բնութեան: Տեղ-տեղ պու-
րակաց և թփոց բոյլերու մէջ թևաթափ թափ
կը զարթնուն թառած թռչունք: Եփրատայ ե-
զերքներէն փուլ փուլ կը փլչին հողեր շառաչ-
մամբ ջրոյն մէջ: Գետը երբէք զւարթ չէ, հե-
ծութեան կերպարանք մը ունի, և իւր ձայնը
կը նմանի վշտացելոյ մը կամ խոցելոյ մը հե-
կեկանաց: Ուղեոր սազ մը նստած Եփրատին
ալեաց վրայ կը նաւի յառաջ՝ գրեթէ անբաժան
մեղմէ, պահ ընդ պահ իւր գեղեցիկ գլուխը և
երկայն պարանոցը պարզելով ուշագիւր կը զի-
տէ զմեզ: Չորամէջ է մեր գնացքը, և լերանց
կողերու վրայ աստ և անդ գեղեր կան: Պրակ
պրակ ծառոց մէջէն խոխոջելով կը թափին ջրեր և
կը ծախին Եփրատայ մայրենի ծոցը: Մեր ձախ
կողմը կը տեսնանք ապառաժ մը տաշւած և
վրան բեռագիր. կը պատմեն թէ՛ թրլիամի գիր
է այն...

Գ. Ե. Սրամանյան



Լաստանաւ Եփրատի վրայ

ԱՐԵՄՏԵԱՆ ԵՓՐԱՏԻ

Վտակներից են Սարչամայ, Տուզլի, որ ա-
ղի կընշանակի, Գայլ (Լիզոս կամ Չարդաք սու),
Գոհանամ կամ Սեպուն սարից, և Ոսկեգետակ,

որ գալիս է Ոսկի սարերից: Ոսկի սարերին թուրքերը Սարի Զիչազ են ասում, դրա համար էլ շատ բարտեզների վրայ Ոսկեգետակը նշանակւած է Սարի Զիչազ անունով: Ոսկեգետակի բերանից մի քիչ ներքե են միանում եփրատի երկու ճիւղերն ու իջնում հարաւ: Մեր անուշ հայրենախօս բանաստեղծը, Սրբանձտեանը, Ոսկեգետակի մասին խօսելիս՝ ասում է «...Իր փունքը կը նմանին կոյսի վարսերուն, սաղարթախիտ ծառատունկերով, և իր ծոցոյն մէջ կը լողան կարմրախայտ ոսկեփայլ ձկուներ...»

ԱՐԱԾԱՆԻՆ

Եփրատի արեւելեան մեծ ճիւղն է, կոչւում է Արեւելեան Եփրատ, իսկ արեւմտեան ճիւղի խառնուրդի մօտերքում—Բալուայ գետ, Բալուքաղաքի անունով: Արածանուն թուրքերը Սուլթան Մուրադի անունով Մուրադ չայ են անւանում:

Արածանու ափունքը բխում են Ծաղկանց լեռների հիւսիսային լանջերից, որ հնում կոչւում էր «Ծաղկազարդ վայելչութիւն»:

Եւ հին Ծաղկազարդ վայելչութիւնից իջնելով, իր մէջ ընդունելով Դիադինի առատ ջերմուկների աղբիւրներն և ուրիշ լեռնային վտակներ, բնական կրային կամուրջի տակից, Ս. Յով-

հաննէսի վանքի առջեից անցնելով, գալիս է Արածանին, վանքի ներքե, հին քարաշէն գեղեցիկ կամուրջը մի կողմը թողնում, անցնում կամուրջից դէպի ձախ...
—Դուք գիտէք, պարոն, թէ ինչու է կամուրջը մի կողմը թողնում Արածանին ու տակովը չի անց կենում, հարցնում է տեղացի ուղեկիցը:

—Չգիտեմ: Ինչո՞ւ է էդպէս անում:

—Էս կամուրջը հին կամուրջ է: Իր ժամանակին հայ իշխաններն են շինել: Բայց էն օրւանից որ էս հովտից Հայերը հալածւեցին, Արածանին էլ խռովեց, իր ընթացքը փոխեց ու կամուրջը թողեց: Էլ կամուրջի տակովը չի անց կենում: Ասում են էսպէս պէտք է մնայ, մինչև որ Հայերը նորից ետ կը գան էս հովիտը:

Եւ ինչքան խորհրդաւոր ու գեղեցիկ է էս հին խօսքն ու զգացմունքը: Ինչ լաւ են հասկացել Արածանուն...

Չէ՞ որ Արածանին Հայոց ամենահին, ամենահարազատ ու ամենասրբազան գետն է: Չէ որ գիտնականներն էլ ասում են, թէ նախ քան Արաքսի հովիտն իջնիլը Հայերի նախապապերը Արածանու հովիտը եկան, ու էստեղ էին ապրում Հայաստան մտած առաջին Հայերը:

Չէ որ Արածանու ափերին էին ապրում Հայոց հին աստուածներն ու աստուածուհիները

ու նրա վճիռ ջրերով էին լողանում ամպն ու մշուշը իրանց քօղ առնելով:

Ձէ որ նրա ջրերը եղան հայ ազգի քրիստոնէութեան աւագանը: Եւ հայ ազգի առաջին մկրտութեան տեղը դեռ կանգնած է հայոց հին աւագան-վանքը, Ս. Յովհաննէսի վանքը, անսասան մինչև էսօր:

Վանքից վերև բարձրանում է նւիրական Նպատ ուտը, իսկ առջևը տարածւում է Ձիրաւի դաշտը, որի անունը միայն Ձիրօ քրդաբնակ գիւղն է յիշեցնում այժմ:

Եւ էսպէս, հին կամուրջը թողնելով մի կողմ, կամուրջի կողքից անց է կենում Արածանին, հետն առնում Ծաղկանց, Սինակայ ու Զրաբաշիի վտակաշատ լեռներից իջնող բազմաթիւ գետակներն ու վտակները ու Բագրեանդից թեքւում դէպի արևմտահարաւ, դէպի Տարօն:

ԱՐԱՍԱՆՈՒ ԱՓԵՐԻՆ

Տարօն, սրբավայր կրօնի և աստուծաշատութեան: Տարօն, բնագաւառ հայոց աստուծոների և աստուծուհիների: Ահա կրկին երևաց վեհափառ Արածանին—հայոց սրբազան Գանգէսը: Եօթանասուն տարի առաջ*) այդ գետի

*) Հեղինակը իր Սամուէլ վէպի մէջ խօսում է չորրորդ դարի դէպքերից:

ափերի մօտ դեռ ազատ, համարձակ արածում էին սպիտակ արջառները, որ նւիրւած էին Անահայ տաճարին: Եօթանասուն տարի առաջ այդ գետի ափերի մօտ դեռ զբօսնում էին հայոց դիցունու եղջերուները, որոնց պարանոցները զարդարած էին ոսկեայ օղամանեակներով:

Սամուէլի աչքի առջևն էր այդ գետը: Սամուէլը անցնում էր Քարքէյի վրայով: Դեռ վաղեմի դիցանէր անտառները հովանաւորում էին այդ լեռան գեղեցիկ բարձրաւանդակները: Եւ Սամուէլի տխուր յիշողութիւնները թռչում էին դէպի անցեալը, դէպի ոչ այնքան հեռաւոր անցեալը: Այդ անտառի մթութեան մէջ, այդ սքանչելի բարձրաւանդակների վրայ, կանգնած էին հայոց Յաշտից տաճարները: Այնտեղ Հայաստանը հաշտութեան զոհեր էր մատուցանում իր աստուածներին: Կարծես, Սամուէլը հէնց այդ րոպէում տեսնում էր «Վիշապաքաղ» Վահագնի տաճարը,—քաջութեան աստուծոյ տաճարը, որ լցւած էր հայոց թագաւորների զանձերով: Նրա մօտ բարձրանում էր «Վահագնի սենեակը», որի մէջ կանգնած էր հայոց անպարտելի դիւցազնի գեղեցիկուհին—«Ոսկեծոյլ» Աստղիկը: Տեսնում էր և «Ոսկեմայր-ոսկեծին» Անահտի տաճարը, որի մայրական խնամակալութեան ներքոյ Հայաստանը վայելում էր փառք և կենդանութիւն: Այդ երեք մեծագանձ տաճարների խումբը

ներկայացնում էր Հայոց «Յաշտից տեղերը»:

Այնտեղ, Հայոց տարեմուտին, Նաւասարդ ամսի սկզբում, կատարւում էր ընդհանրական աշխարհախումբ տօնախմբութիւնը: Յայտնւում էր Հայոց արքան, յայտնւում էր Հայոց մեծ քրքումապետը, յայտնւում էին և Հայոց նախարարները: Արքան իւր ձեռքով բաց էր անում զոհաբերութեան մեծ հանգեսը, հարիւր սպիտակ ցոլ, ոսկեգօծ եղջիւրներով, զոհ մատուցանելով իւր աստուածներին: Նրա օրինակին հետևում էին բոլոր մեծամեծները:

Նոր տարին բերում էր իւր հետ և նոր կեանք: Հայաստանը այդ տօնախմբութեան ժամանակ պէտք է ցոյց տար իւր աստուածներին իւր անցեալ տարւայ յառաջադիմութեան պտուղները: Վահագնը քաջութիւն էր պահանջում, Անահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սէր և բանաստեղծութիւն:

Կատարւում էին հանձարի և քաջութեան մրցութիւններ: Բանաստեղծը իր յօրինած երգն էր երգում, երաժիշտը ածում էր իր բամբուխ վրայ, ըմբիշը իր բազուկների ուժն էր ցոյց տալիս, իսկ վարպետը՝ իր գեղարւեստի արդիւնքը: Լինում էին զինախաղներ, լինում էին մենամարտութիւններ, քաջը քաջի հետ և մարդը՝ կատաղի ցուլի կամ գազանի հետ: Լինում էին արշաւանքներ՝ ձիաներով, կառքերով կամ

ոտով՝ արագավազ եղջերուների հետ: Յաղթողը ստանում էր այն վարդեայ պսակներից մէկը, որոնցով զարդարւած էր լինում Աստղկայ վարդերով վառւած տաճարը: Այդ պատճառով այդ տօնախմբութիւնը կոչւում էր Վարդավառի տօնախմբութիւն:

Նոր տարին բերում էր իր հետ և նոր կեանք: Հին տարին անցնում էր: Պէտք էր քաւել հին մեղքերը և նորոգւած մաքրութեամբ մտնել նոր կեանքի մէջ: Կատարւում էր ընդհանրական մկրտութիւնը: Մեծ քրմապետը առնում էր Արածանի ալիքներից սուրբ ջուրը և ոսկեայ ցնցուղներով սրսկում էր բազմութեան վրայ: Նրա օրինակին հետևում էին բոլոր ուխտաւորները. ամենքը միմեանց վրայ ջուր էին սրսկում: Այդ միջոցին օդը լցւում էր միլիօնաւոր սպիտակ աղաւնիների բազմութեամբ: Իւրաքանչիւր ուխտաւոր մի մի աղաւնի էր թրուցնում և սիրոյ աստուածուհու (Աստղկայ) նւիրական թուշունները, մաքուր, անբիծ, որպէս սիրոյ անարատ ոգիներ, սաւառնում էին, սրանում էին, ձախը էին առնում նրա սպիտակ մարմարիօնեայ տաճարի շուրջը:

Զոհ, ջուր և աղաւնի, արքան մեծ խորհուրդ կայ ձեր մէջ: — Հաշտութեան, քաւութեան և սիրոյ սուրբ խորհուրդը:

Րաֆֆի

ԱՐԱԾԱՆՈՒ

աջակողմեան վտակներից են Չաքր, Ամաքն ու Շառեանը, որ Սուկաւէտի ու Սինակայ սարերից են գալիս: Խնուր, Չաքունուր կամ Բինգեօլ գետը, ձալաղ ջուրը, որ և Մեղտի է կոչւում և Գինեկ, Քոին, որ և միւս Գայլ գետ է կոչւում, և Լիչիկ, և Բերրի. սրանք էլ Բիւրակնեան սարերից են գալիս: Եւ Չմեկաժագն ու Մնձուրը, որ Մնձուրայ սարերիցն են բխում: Մնձուրը իր մէջ է առնում և Քեղայ ու Մեղգեմէրու գետակները:

Չախ կողմի օժանդակ գետերիցն են՝ Վաղըր, որ Լիզ գիւղի անունն էլ է կրում: Մանազկեթի գետը, Սնճանին, որ Սեփանիցն է բխում, Մեղրագետն ու Մամուր:

Մեղրագետը, որ Նեբրովթայ սարիցն է գալիս ու Մուշի մօտից անցնում, էնքան լաւ ջուր ունի, որ տեղացիք ասում են՝ Մուշից Բաղէշ կամ Բաղէշից Մուշ գնացող ճամբորդն էն ժամանակ կը յոգնի, երբ անցնելիս Մեղրագետի ջրից չըխմի:

Եփրատի վտակներից մինը, Խնուսի մի ճիւղը, Մանազկեթի ջուրը, և առհասարակ Հայաստանի ջրերից շատ ջրեր՝ կոչւում են Տուզլի, այսինքն աղի: Էս կարգի ջրերը բոլորն անցնում են աղային շերտերից ու շատ աղ են բերում

իրենց ջրերում՝ լուծւած: Տեղացիք էս աղի ջրերը հաւաքում են քառակուսի փոսերի մէջ, ջուրը ցամաքեցնում, տակը նստած աղը հաւաքում գործածութեան կամ վաճառքի համար:

Տիգրիս

Տիգրիսը հին պարսկերէն է, կը նշանակի նետ: Էս անունը աւած է Տիգրիսին իր սրընթացութեան համար: Տիգրիսին արարերէն ասում են Շաաթ, որ գետ կը նշանակի, իսկ ասորերէն Դիլլաթ, որ ասել է՝ բարձր ափերով:

Ու էդպէս էլ՝ բարձր են Տիգրիսի ափերն ու աղունքը, ինքը նետի պէս սրընթաց: Բարձրից գալիս՝ անց է կենում խոր ու առեւիժ ձորերով, որոնցից, հին ժամանակներից սկսած, խուսափում են բանակներն ու ճանապարհորդները:

Տիգրիսն էլ Եփրատի նման երկու մեծ ճիւղ ունի: Սակայն մինչդեռ Եփրատի ճիւղերը իրարից մօտիկ են սկսում, զուգահեռաբար գնում ապա միանում, Տիգրիսի ճիւղերը երկու հակառակ կողմից են գալիս, մինը արևելքից, միւսը արևմուտքից: Դրա համար էլ Տիգրիսը կոչւում

է պողաւոր գետ: Արեւելեան Տիգրիսը կամ Բոն-
տանը Վասպուրականի ու Կորդուաց լեռներից
է աւելում իր սկիզբը (Վանայ լճից հարաւ-արե-
ւելք): արեւմտեան Տիգրիսը Տաւրոսի հարաւա-
յին լանջերից: Գալիս են Սղերդից ներքև միա-
նում, կազմում մեծ Տիգրիսը, որ գնում է դէպի
հարաւ Բաղդադով անցելով՝ Եփրատին միանա-
նալու: Եւ իրենց խառնուրդում ինչքան ծանր
Եփրատը խաղաղ է ու պարզ, էնքան սրընթաց
Տիգրիսը պղտոր է ու լիքը ճամփին հաւաքած
հող ու տիղմով: 1200 վերստ ճանապարհ է անց-
նում Տիգրիսը:

Ահա և Տիգրիսի ձկներից մի քանիսի ա-
նունները: Շաբոթ, Որբբ, Կարմրախայտ, Օձա-
ձուկ, Պահրան, Ճառօ, Աւրի, Զուլ, Զիուդ կամ
Միրուքաւոր ձուկը և Խալղան Բուղայ, որ կրիայի
ձև ունի:

ՏԻԳՐԻՍԻ ԱՎՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«...Հողոց վանք՝ խոր անդունդի մը մէջ
գետեղւած է, բարձրաբերձ ապառաժներով շր-
ջապատեալ, ի հսումն աթոռ Անահտայ:

...Վճիտ և պաղուկ ջրոյ մեծ վտակ մը կը
հոսի վանքի առջևէն, վտակին եզերքն անշուք և
անձղկ մատուռ մը կայ, յորում ցուցնեն հըս-
կայի մի գերեզման. այնտեղ կրպակեն ոսկերք

Մեծին Տրդատայ: Այդ վտակն է Տիգրիսին, որ
կերթայ ի Շատախ: Վտակին հետ դէպի իւր ծա-
գումն կընթանանք յարևելս հարաւոյ, կապան-
ներ նեղ ու մեղ, ձորեր խոր ու մոր, մացառ-
ներ և ժայռեր մեր բոլորը, ապա՝ ձորահովիտ
մը, փոքրիկ գեղեր, խոտաւէտ տեղիք, անտառ-
թիւնք:

... Ծրծեկով լիաշունչ օդն ու հոտ եղեմին,
զբօնելով այս հաճոյալից տեսեամք կելնենք
զառ ի վեր, ի վեր, որ գագաթն է այդ գեղե-
ցիկ ճակատին, և հոս ամենայն ինչ ոսկեղէն է:
Արևուն ճակատը ոսկեփայլ: Թեք թռչնոց ոսկե-
գոյն: Զայն երգոց հաւուց ի ձայն ոսկեղմը
քնարի: Չողունք խոտոց և բուսոց ոսկի: Ծաղ-
կունք ամենայն, և ամենուրեք ծաղկասփիւռ,
շուշանն ու համասփիւռ: Տերէն ոսկի, տեսին
ոսկի, միայն քարեր կան բոսորային կարմիր: և
այդ քարերու մեծամեծ բեկորներէն շէնքեր կը
տեսնուին ի տեղիս տեղիս, զորս կը բացատրեն
մեզ, թէ Ազնաւորաց բերդ են, և Ազնաւորաց
գերեզմանք:

Քանի մը առատաջուր ակունք կը բխին այս
տեղէն, ամենն ևս անմահութեան ջրեր, բայց
բուն Ակն մէկէ, և ունի իւր վէտն: Ամեն տա-
րի, Համբարձման տօնին, առաւօտ, անմահու-
թեան խնձոր մի հրեշտակներէն կը դուրս այս ա-
կան ջրի մէջ, ուր ամենէն կանուխ հասնողն

միայն կրտսանէ, բայց երբ ձեռն կըկարկառէ առնելու, խնձորն այլևս չերկիր...»

Գ. Ն. Սրամանյան

Հայաստանից դուրս գալուց յետոյ Տիգրիսը իր աջ կողմից, Միջագետքից և ոչ մի վտակ չի ընդունում, ինչ վտակներ ունի բոլորը գալիս են ձախից, արևելեան կողմից, Պարսկաստանի լեռներից։ Ձախից է գալիս և իր ամենամեծ վտակը, Զաւ կամ Զարբ գետը, որ սկիզբն առնում է Հայաստանում, Վանից հարաւ-արեւելք, Աղբաւկայ լեռներում և կոչւում է նաեւ Աղբաւկայ գետ։ Զաւը գնում է Մասուլից ներքեւ է միանում Տիգրիսին, և էնքան մեծ ու ջրառատ գետ է, որ նրա միացումից յետոյ Տիգրիսը կըկնակի է մեծանում ու նրանով էլ աւելի վարար է քան եփրատը, չընայելով եփրատը Տիգրիսից երկու անգամ աւելի տարածութիւն է անց կենում։

ԱՐԵՒԼԵԱՆ ՏԻԳՐԻՍԸ

Կոչւում է Բոհսան։ Իր սկիզբն առնում է Նորգուզի լեռներից (Վանայ լճից հարաւ արեւելք)։ Բոհսանի վտակներից են Թուխ, որին և Բաղէշի կամ Բիթլիսի գետ են անւանում և որի մի ճիւղն է Համեղաջուրը, Խիզան, Մոկս, Շահ-բուր, Սեսիկին։



Տիգրիսի կամուրջը

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՏԻԳՐԻՍԻ


վտակներից նշանաւոր են Բաթմանայ կամ Սասունի գետը (Նիմֆոս), որ Սասունի սարերիցն է գալիս, և Խարզանը։ Բաթմանայ ջրի վրայ մի քարէ հին կամուրջ է շինած, որի կամարը քսան սաժէնից աւելի բարձր է ջրից։

Աղբաւկայ սարերում մի սար կայ, Գարա-հիսար անունով։


Գարահիսարի մի լանջից բխում է Զաւի

ակը, որ Տիգրիսով գնում է Պարսից ծովը: Միւս լանջից բխում է Կարմիր գետի ակը, որ Արաքսով գնում է Կասպից ծովը: Երրորդ լանջից բխում է Պոչաքի ակը, որ գնում է Վանայ ծովը: Եւ ահա դրանից ժողովուրդը էս տեսակ մի աշխարհագրական հանելուկ է ստեղծել: Ասում է՝ Խնչպէս պէտք է լինի, որ հովիւը մի օրում, դեռ արեւ մէջ չըմտած, կարողանայ իր հօտը ջրի երեք ծովի ջրով:

Պատասխանը էս է, թէ պէտք է հօտը տանի Գարահիսարի լեռը, ուր, իրարից էնքան մօտիկ, բխում են երեք ծովերի պատկանող ջրերը:



Սաղմոն Օրագուլ



Ծածան Սաղան

Ս Ե Լ ծ Ո Վ

Սև ծովի Փօքը Ասիական ափերը կտրատւած են անթիւ գետերի ու գետակների հովիտներով ու ձորերով: Սև ծովի ափերը հայկական չեն եղած և Սև ծովը թափւող գետերի միայն վերին հոսանքներն են հայկական, որ բխում են Հայոց լեռներից:

Էդ գետերից նշանաւոր են Ճորոխը, Իրիսն ու Ալիսը:

Ճ Ո Ր Ո Ւ Ը

հին Ակամպսիսն է: Ծնունդ է առնում Սպերի լեռներից, ու պոչը դէպի մէջքը կեռացնելուց յետոյ, արեւմուտքից դէպի արեւելք կիսաշրջանանելով, Բաթումի մօտ թափւում է Սև ծովը: Էն հովիտն էլ, որով անցնում է Ճորոխը, կազմում է մի հակադաս կիսալուսին, որի երկու

կողմից գնում են Պարխարեան ու Մոսկիթեան լեռնաշղթաները:

Երկու կողմից սեպացած բարձրանում ու գնում են սև, կարմիր, կապոյտ, դարչնագույն ժայռերը, յօրինում են մութ, ահուելի անդունդներ: Էն անդունդներում կապարագույն ոլորում ու խուլ որոտում է ձորովը: Բնութեան ամենահոյակապ տեսարաններից միմյն է ձորովը իր հովիտով: Նրա ներքին հոսանքում նեղ ու երկար նաւակներով (ղայրխ), ժայռերի միջով, սուր սահանքի հետ ճարպիկ նաւարկում են լազերը, որոնք և ձորովին անւանում են «Գիժ ձորով»: Բարձր լեռնակիրճերից դուրս հոսելով էնպէս ուժգին թափով է ծովը մտնում ձորովը, որ իր դեղնապղտոր ջուրը կէս մղոնից աւելի տարածում է Սև ծովի մէջ:

ՃՈՐՈՒՄ ՈՒ ԻՐ ՁՈՐԸ

Տեսել ես արդեօք այն ձորն ահաւոր,
Որ անդունդներով անտակ ու անել,
Դժոխքի նման ճառագէմ ու խոր
Ողջ Լազիստանը երկու կէս արել՝
Փակել է չորս դին բանտերը մութ-մութ,
Ուր թափառում են մէգերը կապոյտ,
Եւ շունչ է քաշում տարաբոսն ահեղ,
Գեհնեն է կարծես եռում խելայեղ:

Ուր գիժ ձորովը ընկած դէս ու դէն՝
Վազում է՝ դեղնած իր գոռոգ հերսէն,
Որտեղ աժդահա լեռները բազմած՝
Ժողով են նստել իրարու դիմաց,
Եւ եափնջու պէս անտառներ սև-սև
Ուսերին գցել՝ նայում են ներքև,
Ուր հազարաւոր ջրեր են հնչում
Կուսական օդի լուրթեան միջում,
Տնքում է երկիրն իր բերքի տակին՝
Որպէս դո՛հ մշակ՝ բերկրանքը աչքին:

Դ. Դեմիրճեան



ձորովի կամուրջը



Թորթում

Ճ Ո Ր Ո Ւ Ւ

Վտակներից են Օլթին ու Թորթումը: Օլթին իր մէջ է ընդունում Պարսէզ վտակը, որ այժմ Բարդուս են ասում: Իսկ Թորթումի մեծ ջրվէժը աշխարհի ամենագեղեցիկ ջրվէժներից միսն է համարւում: Շատ է գեղեցիկ և Թորթումի լիճը, որ գոյացած է գետի ճանապարհին՝ երկրաշարժից պատահած փուլքի հետևանքով:

Ի Ր Ի Ս Ը

գետի հին անունն է և ծիածան կընշանակի. այժմ աւելի յայտնի է Եէշիլ ըրմակ Թուրքական անունով, որ ասել է Կանաչ գետ: Սերաստիայի սարերից է գալիս և, ընդունելով Գայլ (Լիկոս) վտակը, Ամասիայից անցնում, թափւում է Սև ծովը: Պղտոր ջրի վատ յատկութեան պատճառով շատ քիչ ձուկն ունի Իրիսը:

«...Իրիս խոժու ու խոտոր, Թանձր ու կարմիր տիղմերով պղտոր կուգայ, երկու կողմն եղած թթենիք և այգիք ոռոգելով:

...Փայտաշէն խախուտ կամուրջով մը անցանք գետը: Ահեղ էր հոս Իրիսին կերպարանքը հսկայի մը նման, որ դեռ դադրած լինէր յաղթական արշաւանքէ. իր աջ ու ձախը և միջևը ձևացած աւագէ կղզեաց վրայ շատ մը հաստա-

բուն ծառոց դիակներ ձգած էր արմատախիլ,
զորս խորտակած էր իր կատաղութեամբ, և տեղ
տեղ արեան մութ գունով թանձր տիղմեր կուտած:
Գ. Ե. Սրամնճտեան

Ա Լ Ի Ս

Նին պատմական գէտն էլ թուրքերը մկրտել
են Գզըլ ըրմակ անունով, որ կընշանակի Կար-
միր գետ: Յիրաւի վառ նարնջագոյն պղտոր է
Ալիսը, տեղ տեղ էլ ուղղակի կարմիր: Կարմրա-
գոյն են էն սարերը, որոնցից ծնւում է Ալիսը,
մեծ մասամբ և էն հողը, որով անցնում է Ալի-
սը: Զուրը փաստում է ցանքին, նրա ջրերից չեն
օգտւում: Վրէն քիչ բնակչութիւն կայ, իսկ մէջը
գրեթէ ձուկը չըկայ, եղածն էլ պարզ ջրերի
խառնուրդներումն է միայն:

Ալիսը Փոքր Ասիայի մեծ ու հռչակաւոր
գետերից մինն է:

Ենթադրութիւն կայ, թէ Հայաստան գա-
լուց առաջ Հայերը Ալիս գետի հովիտումն էին
ապրում:»

Հին ժամանակները արեւմտեան (յունական)
և Փոքր Ասիական ազգերի ազդեցութիւնների
սամանն էր Ալիս գետը:

Մեծ կամուրջներ կան Ալիս գետի վրայ,
որոնցից մինը Հայոց Սենեքերիմ թագաւորի
ազջիկն է շինել տւել:



Կարմրախայտ

Վ ա ն ա յ լ ի ն

Վանայ լիճը չորս կողմից շրջափակւած է
լեռներով ու լեռնաշղթաներով: Իրենից ջուր չի
բաց թողնում, միայն իրեն շրջապատող բարձ-
րութիւններից գետեր ու գետակներ է ընդու-
նում: Էս գետերն ու գետակները թէև մեծ չեն,
բայց որովհետև մեծ ձիւն է գալիս շրջակայ
լեռների վրայ, գարնան ձնհալքին գրեթէ բոլոր
գետերը դառնում են անանցանելի:

Վանայ լիճը թափող գետերից են Նարեկ,
Խոսաբ, Շամիրամ, Մարմես, Բանդումահի, Օռ-
րան:

Մ Ա Ր Մ Ե Տ Ը

ամենամեծն է: Կոչւում է նաև Սև գետ: Վա-
նայ լճի արևելեան Վասպուրականի լեռներից է
ծնունդ առնում: Սև գետովն է անցնում Վա-
նից Պօլիս տանող ճանապարհը, որով էնքան ու

էնքան վանեցիներ են գնացել պանդխտութիւն
ու էնքան վառած, մոլորած նստել են նրա
ափերին ու մղկրտացել:

«...Ախ դու Սե գետ, սե սուգ ընես.

Լուսնակ, արե, ամպ ու աստղեր

Բեզ խոռ նայեն, դու շուտ ցամքես:

էս քանի՞ գամ մեզ տանջեցիր,

Մեզ տանջեցիր ու բռնաւեր

Օտար երկիր անհէր, անմէր

Մեր սիրտն արիր արիւնթաթախ:

Դնւ, թափառուկ սեւաւոր ջուր,

Քանի՞ հայեր քեզնից անցան,

Թողին զաւակ, դուռ-դըրացին,

Գերի գնացին՝ ի՞նչ գիտի ուր...

Կեցիր բարով, քարսիրտ Սե գետ,

Աղի արցունքս առ ջրիդ ծոց,

Վառած սիրտս էլ տար ջրիդ հետ,

Լից Վանայ ծով, ինչ կրակ ու բոց...

Մնաք բարով, իմ կուզան հէր,

Եւ դու, թողմած իմ անուշ մէր...

Արիւնշաղախ աչքիս արցունք,

Կոտրած սրբտիս ջարդած փըշրունք

Հոսեց, լրցեց Սե գետի մէջ,

Սե գետն երես Վանայ ծովին,

Ծով պիտի տայ սար ու ձորին,

Ձեր պիտի տայ մեր աղբիւրին,

Աղբիւր չըռայ սէր ու ծաղկունք,

Լըւայ, սըրբի ձեր լացն ու սուգ:»

«Պանդուխտ Վանցի»

Խ Օ Շ Ա Բ Ը

գալիս է նոյն լեռներից, Բաշկալայի կող-
մից ու անցնում Անգղ գիւղի մօտից, դրա հա-
մար էլ կոչւում է նաև Անգղ գետ:

Պօշաք կընշանակի լաւ ջուր, անուշ ջուր,
որովհետև ծնունդ է առնում անուշահամ աղ-
բիւրներից:

Շ Ա Մ Ի Ր Ա Մ Ն

էլ ծնունդ է առնում նոյն Վասպուրականի
լեռներից, Հայոց ձորից, մեծ, յորդաբուխ աղ-
բիւրներիով և հոսում է պարզ ու հանդարտ: Եւ
մինչդեռ Պօշաքն արևելքից արևմուտք է գնում՝
Շամիրամը գալիս է հարաւից դէպի հիւսիս, մի
քարեայ փոս կամուրջով, խաչածէ կտրում, Պօ-
շաքի վրից անցնում և իր ամբողջ ընթացքի
վրայ արտ ու անդաստան ոռոգելով, Արտամե-
տու այգիները ջրելով գնում դէպի Վանայ այ-
գեստանն ու անցնում, թափում Վանայ լիճը:

ԲԱՆԴՈՒՄԱՆԻՆ

էլ մի քանի անուն ունի. և Բերկրու գետ է կոչւում և Առեսու Բանդումահին գալիս է Ծաղկանց լեռների հարաւային լանջերից, և հէնց էն լեռներից, որոնց հիւսիսային լանջերից ծնունդ է առնում Արածանին:

ՕՐՕՐԱՆԸ


Նոյնպէս Ծաղկանց լեռների հարաւային լանջերից է առնում իւր սկիզբը: Անցնում է Զիւլանայ խոր ձորերով ու թափում Վանայ լիճը հիւսիսային կողմից:

ՆԱՐԵԿԱՅ

գետակը փոքր է, բայց անունը մեծ է ու սուրբ: Գալիս է Ռշտունեաց լեռներից ու, մեղեդի խոխոջելով, Նարեկայ վանքի մօտից անց կենում գնում թափում Վանայ լիճը՝ Ախթամարայ կղզու հանգէպ:

«... Հողը սուրբ, ջուրը սուրբ, քարը սուրբ, խոտը սուրբ, արեւը սուրբ: Ամենայն ինչ սուրբ է տեղւոյս, ամենուն դպեր է սուրբ Նարեկացու ձեռքը, ոտքը, շունչը, ձայնը, հառաչանքը, օրհնանքը...»

Գ. Ե. Սրանձտեան



կոր

ԿԻԼԿԻՐԱ

Միջերկրական ծովի հին Իսոսի կամ նոր Ալեքսանդրէտտի ծոցը մեր Ռուբինեան թագաւորութեան շրջանում կոչւում էր Հայոց ծոց կամ Հայոց ծով: Նրան երեք կողմից աղեղնաձև պատում են Ամանոսի ու Տաւրոսի լեռնաշղթաները, որոնցից բազմաթիւ գետեր ու գետակներ են իջնում և, Կիլիկիայի հարթավայրը ոռոգելով, թափում են Հայոց ծոցը:

Կիլիկիայի արեւմտեան մասը, որ բռնում են Տաւրոսի լեռնակոյտերը, կոչւում է Լեռնային կամ Քաբային Կիլիկիա, իսկ արեւելեան հարթ մասը՝ Դաշտային Կիլիկիա:

Կիլիկիայի լեռների հարաւային լանջերը ծածկւած են առատ բուսականութիւնով ու մեծ անտառներով: Ամբողջ Փոքր Ասիայում դժար է

գտնել Կիլիկիայի մայրի անտառների նման անտառներ: Բայց Կիլիկիայի ժողովուրդն էլ, ինչպէս շատ տեղերի մեր լեռնական ժողովուրդները, չի հասկանում իր հայրենի լեռների առողջութեան ու գեղեցկութեան գաղտնիքը՝ անխնայ ոչնչացնում է նրանց հսկայական անտառները: Եւ գլխաւոր պատճառներից մինն էլ էս է, որ Կիլիկիայի գետերից շատերը ամառները ցամաքում են:

Կիլիկիայի գետերից քչերն են մշտահոս: Դրանցից են՝ Անամուռ, Կալիկաղնոս, Լամաս, Կիւղնոս, Սինուս և Զինուս:


Կիլիկիայի գետերն էլ, ուրիշ լեռնային գետերի նման, լեռներից ու լեռնահովիտներից շարունակ հեղեղել, տիզմով լցրել են իրենց ներքին հովիտները, ստեղծել են շատ արգաւանդ մի հող, բայց դրա հետ միասին և էն տեսակ ճահիճներ, որ մոծակի ու ջերմ ու տենդի բներն են կառարեալ: Ամառները ճանապարհորդներն աշխատում են ցերեկով անցնել էդ տեղերից, որ գիշերը վրայ չը հասնի և ստիպւած չըլինեն գիշերելու:

Կ Ի Ի Դ Ն Ո Ս Ը

Կոչւում է նաեւ Տարսոսի գետ, Պոլոս առաքեալի հայրենի Տարսոս քաղաքի անունով, որ շինած է իր վրայ Կիւղնոսը պատմութեան

մէջ սառը գետի համբաւ ունի, որովհետեւ նրա մէջ լողանալիս մրսեց Ալէքսանդր Մակեդոնացին:

Գովւած է Կիւղնոսի առատ կարմրաթայտը:



Մաիսի կամուրջը Զահանի վրայ

Զ Ա Ն Ա Ն

Կամ ԶԻՆՈՒՆ գետը հին Պիւռամոսն է: Կիլիկիայի մեծ գետն է: Սրա վերին հոսանքի վրայ է Զէյթունը: Ինչքան վերին հոսանքում սրընթաց, էնքան էլ մարմանդ է ներքին հոսանքում, գաշտում: Յայտնի են Զահանի գե-

տաբերանի ճանճուտները: Մի ժամանակ Ջահանի գետաբերանը նաւակայան է եղած, բայց էնքան տիղմ է տարել լցրել, որ ցամաքը մեծացրել է ու փոխել միանգամայն, և այժմ միայն նաւարկելի է:

Ս Ի Ն Ո Ւ Ն Ի

կամ Սարոսի աղուներն երբ կիլիկիայից դուրս են: Սինունը երկու մեծ ճիւղ ունի, Ծամրնդաւ և Սառան: Ծամրնդաւը իր անունն առել է Բագրատունեաց վերջին Գագիկ Թագաւորի համանուն քաղաքից: Այժմ կոչւում է Ջամանթի: Սինունի արեւելեան ճիւղը, Սարոս կամ Սարիս, աւելի երկար ճիւղն է, գալիս է Սարրան անունով սարից, Սինուն կոչւում է երկու ճիւղերի միացումից յետոյ, դաշտում: Կիլիկիայի ամենաերկար գետն է:


Սինունի գետաբերանն էլ ճանճուտ է ու նաւարկելի:

Կ Ա Լ Ի Կ Ա Դ Ն Ո Ս Ը

յայտնի է և Սելեկիոյ գետ, Սելեկիա քաղաքի անունով: Քարային Կիլիկիայի սրբնթաց գետն է: Գալիս է Տաւրոսի լեռներից:


Տասնուերկուերորդ դարում, խաչակրաց արշաւանքի ժամանակ, գերմանական Ֆրիդրիխ Ա.

Բարբարոսա կայսրը, երուսաղէմ գնալիս, մեր Լեոն Ա. Թագաւորին հիւր եղած միջոցին խեղդեց էս գետում: Նրանից յետոյ Ֆրիդրիխ Բարբարոսայի ու Կալիկադնոսի անունը պատմութեան մէջ մնում են իրար հետ կապւած:



Սինուն գետը և Աղանան

զմե, օղյաւք ներանոցմ, զգոյալ մասնազգեալ
-րմի միջոցին ճարմ զմիջ միջոցաբան ի մեմ
միջոցիցն լոտմ, բնազդմ, նոտմք աշ բն
-աւք զմեմք միջոցաբան լո միջոցաբան
: ճալաւք աշ զալի մի նոտմ Զմե մեմք:



ՀԱՅՈՑ ԳԵՏԵՐԻ ՅԱՆԿԸ

Արաքս	5	Երնջակայ	10
Արփաշայ	10	Եփրատ	36
Ախուրեան	10, 11	Երասխ	5
Սգատ	10, 18	Զանգի	10
Ալինջա	10	Զաղարան	23
Աղաւնու	10	Զագամ	30
Արփա	22	Զաւ	53
Ալգէթ	29	Թարթառ	30
Աղսաւ	29	Թուր	53
Արածանի	37, 42	Թորթում	60
Ամաթ	48	Իրիս	56, 60
Ալիս	56, 61	Լիզ	48
Անամուռ	66	Լինաս	30
Բարկուշատ	10, 19	Լիկոս	60
Բերբեր	30	Լամաս	66
Բինգիւլ	48	Արամ	29
Բոնտան	53	Աաչէն	30
Բաթման	54	Անուս	48
Բանդումանի	62, 64	Արկան	53
Գառնու ջուր	18	Աարզան	54
Գինայ	23, 24	Աօշաբ	62, 63
Գուրակ	30	Շամընդաւ	68
Գուրան	30	Կապոյտ	23
Գարգառ	30	Կարմիր	23
Գայլ	41, 60	Կուր	26
Գինեկ	48	Կարնոյ գ.	37
Դեղին	23, 24	Կալիկադոս	66, 68
Դերեղ	29, 33	Կիւղնոս	66

Հրազդան	16	Պիւռամոս	67
Հաքհարի	22	Զահուկ	10
Համեղաշուր	53	Զինուն	66
Զորագետ	33	Զահան	67
Ճապաղ	48	Սառչամա	41
Ճորոխ	56	Սիպտակ	23
Մանազկերտի գ.	48	Մնճանի	48
Մակու	23	Սևտիկին	53
Մեծամօր	10	Սասունի գ.	54
Մուրց	23	Սև գետ	62
Մեղտի	48	Սինուն	66, 68
Մնճուր	48	Սարոս	68
Մէրգէմէրու	48	Սասուն	68
Մամուշ	48	Վարդ	48
Մեղրագետ	48	Վարդամարգ	23
Մոկս	53	Վեդի	10
Մարմետ	62	Տամբատ	23
Նախիջևանի գ.	10	Տաւուշ	29
Նարեկ	62, 64	Տղմուտ	23, 25
Շամքու	30	Տրտու	30
Շառեան	48	Տուզլի	41
Շահբուր	53	Տիգրիս	50
Շամիրամ	62, 63	Փարւանայ	29
Որոտան	19	Փոցխով	26
Ոսկեգետակ	41	Քասաղ	10, 14
Չաթ	48	Քեօնդալան	22
Չաւրնդուր	10	Քուռ	26
Չընչաւատ	23	Քղի	48
Չարբունուր	48	Քեղայ	48
Չմշկածաղ	48	Օլթի	60
Պարտէզ	60	Օրօրան	62, 64



12055